ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 1210-Ա

ՕՖԵԼՅԱ ԱԹՈՅԱՆԻՆ ԵՎ ՆՈՒՆԵ ՉՈԲԱՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ԴԱՐՁՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 97-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջները և ընդառաջելով Օֆելյա Աթոյանի խնդրանքին՝ /մտից մատյան՝ 09.10.2020թ. թիվ 1401/ **որոշում եմ.**

1.Օֆելյա Աթոյանին և Նունե Չոբանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Հանրապետության փողոց թիվ 23 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը 0,01095 հա/ ծածկագիր՝ 03-003-0087-0038/ բնակելի տնով դարձնել երկու գույքային միավոր և հասցեավորել համապատասխանաբար՝

ա/ 0,00841 հա-ի համար՝ ՀՀ Արարատի մարզ Մասիս քաղաք Հանրապետության փողոց թիվ 23 տուն

բ/ 0,00358 հա-ի համար՝ ՀՀ Արարատի մարզ Մասիս քաղաք Հանրապետության փողոց թիվ 23/1 հողամաս:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից և ենթակա է պետական գրանցման :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թ.
Ք.ՄԱՍԻՍ